

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

<i>ՀԱՄԱՅՆՔ</i>	<i>ՍՏԵՓԱՆԱՎԱՆ</i>
<i>ՄԱՐԶ</i>	<i>ԼՈՒԻ</i>



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ստեփանավան քաղաքը դարերի պատմություն ունի: Դեռևս մ. թ.ա. 2-րդից 1-ին դարերում Ստեփանավանն իր շրջակայքով կազմել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի մի մասը և մտել է Արտաշեսյան թագավորության մեջ: Մ.թ. 1-ից 4-րդ դարերում եղել է Արշակունյաց թագավորության կազմում: 385 թ.-ին Մեծ Հայքի բաժանումից հետո Տաշիր գավառի մեջ մնացել է հայկական մարզպանության կազմում: 10-րդ դարում եղել է պատմական Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյանների) թագավորության մայրաքաղաքը՝ Լոռե բերդաքաղաքով: Դավիթ Անհողինի (989-1048 թթ.) օրոք Կյուրիկյանների թագավորությունը հզորացավ և ընդլայնեց թագավորության տարածքները, իսկ Ստեփանավանի տարածքը՝ «Լոռե» անվանումով կազմեց թագավորության կալվածքի մի մասը: 1185 թ.-ից սկսած Ստեփանավանն իր շրջակա տարածքներով Լոռու կազմում տրվեց Ջաքարյաններին:

1118-1122 թթ. վրաց թագավոր Դավիթ Շինարարը մաքրեց Լոռին թուրք սելջուկներից և այն միացրեց Վրաստանին:

17-րդ դարի սկզբին Ստեփանավանի տարածք են գաղթում Շահ Աբասի հալածանքներից փախած հայեր և հիմնում են Չեչմանիս բնակատեղին:

1801 թվին Տաշիր գավառի կազմում Ստեփանավանի տարածքը նույնպես կցվել է Ռուսաստանին: Այդ տարիներին Յարական Ռուսաստանի Եկատերինա կայսրուհու գահակալության ժամանակներից այս տարածքներ են աքսորվում մեծ թվով սպաներ, նաև կուսանոցների կույսեր, ովքեր ընտանիք կազմելով հիմնում են Սլաբոդկա անունով նոր թաղամասը: Ներկայումս դրանք Կոմիտաս, Մայակովսկի, Անդրանիկ փողոցներն են, ուր մինչև հիմա էլ կան ռուսական տիպի տներ: Մայակովսկի փողոցի տներից մեկում էլ բնակվել են ռուս մեծ բանաստեղծ Մայակովսկու ծնողները:

1810 թ. տարածքը հանդես է եկել որպես քաղաք և կրել է Ջալալօղլի («ջալալի որդի» թուրք.) անվանումը՝ ի պատիվ Արցախի իշխանական Հասան-Ջալալյաններ տոհմի: Այս մասին է վկայում Ստեփանավանում գտնվող գերեզմանատան հուշաքարը՝ «Ավանս հիմնեց որդին իշխան Դավիթ Հասան-Ջալալյանց՝ 1810»:

Ջալալօղլի քաղաքի հիմնադիրներից և քաղաքը շենացնողներից են նաև Գրիգորյանների, Առաքելյանների, Ջիլավյանների, Մելիքսեթյանների, Սարգսյանների, Դադիվանյանների և այլ առևտրական ընտանիքները:

18-րդ դարում Ջալալօղլին եղել է Լոռու միակ քաղաքը: Այստեղ գործել է չորսամյա երկսեռ դպրոց, որտեղ 1879-1883 թթ. կրթությունն է ստացել մեծ գրող Հովհաննես Թումանյանը: 19-րդ դարի վերջին այս դպրոցում է դասավանդել ազգային- ազատագրական շարժման հայտնի գործիչ, դաշնակցական Հովսեփ Արղությանը:

1918 թվի գարնանը Ջալալօղլիում է գտնվում հայկական բանակային կորպուսի դիվիզիան՝ ՀՀ ազգային հերոս, գեներալ-հրամանատար Անդրանիկ Օզանյանի գլխավորությամբ: Նույն թվականին, երբ Հայաստանի և Վրաստանի միջև տեղի է ունենում զինված բախում, ստեղծվում է Լոռու «Չեզոք գոտին», որտեղ ընդգրկվում է նաև Ստեփանավանի տարածաշրջանը: Այս ժամանակաշրջանի հայ ազգային-ազատագրական պայքարն է նկարագրել գրող Խաչիկ Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» գրքի «Բերդ» գլխում:

1921 թ. փետրվարի 11-ին Լոռու «Չեզոք գոտին» վերացվեց, և Ստեփանավանը՝ շրջակա գյուղերով միացվեց Լոռի-Փամբակի գավառին, որը Խորհրդային Հայաստանի 9 գավառներից մեկն էր:

1923 թ. ի պատիվ հեղափոխական գործիչ Ստեփան Շահումյանի Ջալալօղլին վերանվանվեց Ստեփանավան:

Ստեփանավան քաղաքը զգալի տուժել է 1988-ի Սպիտակի երկրաշարժից: Հետագա տարիներին քաղաքն սկսեց վերակառուցվել, և տարածվել նաև Ձորագետի ճախ ափին:

2010 թ. Ստեփանավան քաղաքը նշեց իր 200-ամյակը:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ստեփանավան քաղաքը մտնում է ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային կազմի մեջ՝ նվերով մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ տերին: Ընդհանուր տարածքը 5333.6 հեկտար է, որից 1020 հա-ը կառուցապատված: Քաղաքի ընդհանուր պարագիծը 26.5 կմ է, հյուսիսից հարավ միջին լայնությունը կազմում է 6.3 կմ, իսկ Աելքից արևմուտք երկարությունը՝ 4 կմ: Ստեփանավան քաղաքի ամբողջ երկարությամբ՝ Աելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի թայտական նշանակության ՄՅ ավտոմայրուղին, որը համայնքի համար ունի ռազմավարական և շիալ-տնտեսական նշանակություն: Ստեփանավանից սկսում են 3 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Ալավերդի, Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորփի և Ստեփանավան-Կաթնաղբյուր:

Ստեփանավանից հյուսիս-արևելք մոտ 15կմ հեռավորության վրա է գտնվում Ստեփանավանի օդանավակայանը, որտեղ իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ և այն պատկանում է ԱԻ նախարարությանը:

Քաղաքը գտնվում է հանրապետության հյուսիսային մասի սեյսմոակտիվ գոտում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	683
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	- 4.2
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	16.7

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ)	
1.1) Ուրասար վարչական միավոր	7.2
1.2) Կաթնաղբյուր վարչական միավոր	18
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ստեփանավանի շրջան
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	157
3.2) մարզկենտրոնից (կմ)	36
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	20
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	-
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	-
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	36
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1400
5. Համայնքի վարչական տարածքը (հա)	5333.6
6. Սահմանակից համայնքների անվանումները	Տաշիր, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Սպիտակ խոշորացված համայնքներ և Շիրակի մարզ

7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	stepanavan.lori@mta.gov.am
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	stepanavan.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	+374 256 2 22 33
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	+374 256 2 22 33
11. Համայնքի հեռախոսային կոդը	+374 (256)
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	2901
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	20527
2. Գրանցված ծնունդների քանակը	263
2. Մահացության դեպքերի քանակը	247
3. Ամուսնությունների քանակը	52
4. Ամուսնալուծությունների քանակը	36
5. Տնային տնտեսությունների թիվը	5727
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	1113
7. Կենսաթոշակառուների քանակը	5538
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	4018

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	5
5. Հանրակրթական դպրոցների քանակը	9
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	2
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	1
9. Մարզադպրոցների քանակը	1

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	117659
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	147
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	3903

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	20933.4
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	18110.1
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1169.0
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	3885
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	847
7. Խոզերի գլուխաքանակը	940
8. Գյուղատնտեսական տեխնիկա	32
8.1 տրակտորներ (քանակը)	32
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	868

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	37
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	94.9
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	2
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	67
6.2 Էքսկավատորների քանակը	4
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	4
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 Աղբատար մեքենաների քանակը	6
6.6 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	1
6.7 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.8 Ավտոաշտարակների քանակը	2
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	8.1
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	4
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	416719.1	413589.8
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	57701.3	55027.4
2.1 հողի հարկ	16494.4	14009.2
2.2 գույքահարկ	41206.9	41018.2
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	272299.2	272299.2
3.1 դոտացիա	262030.7	262030.7
3.2 սուբվենցիա	10268.5	10268.5
4. Մուտքեր հողի օտարումից	38200.0	36817.0

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	421153.4	414418.6

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	5837.2	5837.1

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	30784.8	10268.4

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	56
1.1 համայնքային ծառայողներ	27
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	102821.9
3. Ավագանու անդամների թվաքանակը	15

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
բ. Ստեփանավան	
Մանկական զբոսայգու հիմնանորոգում	Զբոսաշրջային քաղաքի համար անհրաժեշտություն է
Փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում	Ծայրամասային փողոցները հիմնականում անբարեկարգ են որոնց լուսավորումը անհրաժեշտություն է
Փողոցների վերանորոգում	Կպահպանի փողոցների ասֆալտապատ շերտը հետագա քայքայումից
Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	Կպահպանի բազմաբնակարան շենքերի պատերի և կոնստրուկցիաներ քայքայումը ներհոսող անձրևաջրերից
Ձորագետի կիրճի նախկին միջպետական ճանապարհի հիմնանորոգում	Այն Ձորագետի կամրջի այլընտրանքային ճանապարհն է ունի ռազմավարական նշանակություն
Մանկապարտեզ N 3	Սանհանգույցները ունեն հիմնանորոգման, իսկ տանիքը վերանորոգման հրատապություն
Չարենցի փողոցի հիմնանորոգում	Կրեոնաթափի կենտրոնական Մ. Բաղրամյան փողոցը և համայնքի կենտրոնը
գ. Ուրասար	
Փողոցների գիշերային լուսավորություն	Փողոցները հիմնականում անբարեկարգ են որոնց լուսավորումը անհրաժեշտություն է
Զրամատակարարում	Բնակավայրին մատակարարվող ջուրը չի համապատասխանում պահանջվող պարամետրերին, ցանցը ունի վերանորոգման խիստ անհրաժեշտություն
Գազաֆիկացում	Բնակավայրի գազաֆիկացումը կնպաստի շրջակա անտառների պահպանմանը և կթեթևացնի համայնքի բնակչի հոգսը
Փողոցների վերանորոգում	Կենտրոնական փողոցը անհրաժեշտ է ասֆալտապատել մնացած փողոցներում իրականացնել խճապատման և վերին պաստառի ուղղման աշխատանքներ
Համայնքային կենտրոնի վերանորոգում	Համայնքային կենտրոնը կդառնա բնակիչների առօրյան կազմակերպելու վայր
Գերեզմանատան ցանկապատում	Կպահպանի գերեզմանատունը ընտանի կենդանիների մուտքից
գ. Կաթնաղբյուր	
Զրամատակարարում	Բնակավայրին մատակարարվող ջուրը չի համապատասխանում պահանջվող պարամետրերին, ցանցը ունի վերանորոգման խիստ անհրաժեշտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գազաֆիկացում	Բնակավայրի գազաֆիկացումը կնպաստի շրջակա անտառների պահպանմանը և կթեթևացնի համայնքի բնակչի հոգսը
Փողոցների վերանորոգում	Կենտրոնական փողոցը անհրաժեշտ է ասֆալտապատել մնացած փողոցներում իրականացնել խճապատման և վերին պատտառի ուղղման աշխատանքներ
Համայնքային կենտրոնի վերանորոգում	Համայնքային կենտրոնը կդառնա բնակիչների առօրյան կազմակերպելու վայր
Գերեզմանատան ցանկապատում	Կպահպանի գերեզմանատունը ընտանի կենդանիների մուտքից